

ՄԻՋԱԳԵՊ

ՈՒՂԱՓԱՌՈՒԹՅԱՆ ՎԵՀԱԺՈՂՈՎ, ՍԱԴՐԱՆՔ, ԽՈՐՀՐԴԱՐԱՆ ՆԵՐԽՈՒԺԵԼՈՒ ՓՈՐՁ, ԲԱՍՈՒՄՆԵՐ ԻՐԱՎԱՊԱՆՆԵՐԻ ՀԵՏ

Հունիսի 20-ին Թբիլիսիում, խորհրդարանի նիստերի դահլիճում աշխատանքն սկսեց Ուղղափառության միջխորհրդարանական 26-րդ վեհաժողովը, որին մասնակցում էին զագաթաժողովի անդամ 23 երկրների խորհրդարանական պատվիրակությունները: Մասնակիցների թվում էին Ռուսաստանի, Ուկրաինայի, ԱՄՆ-ի, Լեհաստանի, ինչպես նաև Հայաստանի ու այլ երկրների պատվիրակություններ: Հայաստանի պատվիրակությունը գլխավորում էր Ազգային ժողովի փոխնախագահ Ալեն Սիմոնյանը:



Ուղղափառության միջխորհրդարանական վեհաժողովի անցկացման համար հատկացվեց Վրաստանի խորհրդարանի դահլիճը, ինչը վերջին հաշվով դարձավ լուրջ դիմակայության պատճառ: Բանն այն է, որ վեհաժողովը, հաստատված ընթացակարգի համաձայն, բացելու էր Ուղղափառության միջխորհրդարանական վեհաժողովի գլխավոր քարտուղարը՝ Հունաստանի ներկայացուցիչը, թեպետ բացման պահին վեհաժողովի նախագահողի, այն է Վրաստանի խորհրդարանի նախագահի բազկաթռին հայտնվեց Ռուսաստանի Պետական Դումա-

յի պատգամավոր, կոմկուսի խմբակցության անդամ եւ կոմիտեի նախագահ Սերգեյ Գավրիլովը, որը այդ կազմակերպության նախագահն էր: Նա վրաց լատվամիջոցներին տված հարցազրույցում հատարաբե էր, որ աշխարհում նոր իրավիճակ է, եւ վրացական կողմը պետք է հաշտվի Աբազխայի ու այսպես կոչված Հարավային Օսեթիայի անկախության հետ: Նա մեկն էր նրանցից, ովքեր 2008 թվականին Պետրոնայում պաշտպանեց Աբխազիայի եւ Հարավային Օսեթիայի անկախության ճանաչումը):

(Շարունակությունը՝ 5-րդ էջում)

ԻՐԱՎԻ ԿՈՐԱԽԻՉԵՆ ՀԵՌՄԱՎ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ՆԱԽԱՎԱԶԻ ՊԱՇՏՈՆԻՑ

Հունիսի 21-ին «Վրացական երազանք - ժողովրդավարական Վրաստան» կառավարող կուսակցության թբիլիսյան կենտրոնականում տեղի ունեցավ կուսակցության քաղխորհրդի նիստը: Նիստի աշխատանքին մասնակցեցին կուսակցության նախագահ Բիծինա Իվանիշվիլին, խորհրդի անդամներ, Վրաստանի վարչապետ Մամուկա Բախտանձե, խորհրդարանի նախագահ Իրակլի Կոբախիձե, կուսակցության գլխավոր քարտուղար, Թբիլիսիի քաղաքապետ

Կախա Կալաձե, կուսակցության քաղաքական քարտուղար Իրակլի Ղարիբաշվիլին: Քաղխորհրդի նիստում քննարկվեցին նախօրյակին մայրաքաղաքում տեղի ունեցած իրադարձությունները, ընդունվեց քաղաքական իրավիճակի կարգավորման հետ կապված որոշումներ: Քաղխորհրդը քննարկեց նաև կարդերի հետ կապված հարցեր: Քաղխորհրդի նիստի ավարտին Իրակլի Կոբախիձե հայտարարեց խորհրդարանի նա-

խագահի պաշտոնից իր հեռանալու մասին: Պատգամավորական իր մանդատից հրաժարվեց նաև վերոնշյալ վեհաժողովի կազմակերպիչներից, խորհրդարանական մեծամասնության անդամ Զաքարիա Քունցիշվիլին: Նշենք, որ Իրակլի Կոբախիձե խորհրդարանի նախագահի պաշտոնը զբաղեցրել է 2016 թվականի նոյեմբերի 18-ին, խորհրդարանական ընտրություններին «Վրացական երազանքի» համոզիչ հաղթանակից հետո:

ՎՐԱՍՏԱՆ - ԱՆՆ

ՄԱՍՈՒՎԱ ԲԱԽՏԱՁԵ. «ՀԱՄԱՏԵՂ ՀՈՉԱԿԱԳԻՐՆ ԱՆՅԱՄԻ ՀԱՆՐԱԳՈՒՄԱՐՄԱՆ ԵՎ ԱՌԱՋԻՎԱՅԻ ԾՐԱԳՐՄԱՆ ՓԱՏՏԱԹՈՒՂԹ Է»

Հունիսի 17-ին Վրաստանի վարչապետ Մամուկա Բախտանձե, Ամերիկայի Միացյալ Նահանգներ կատարած գրեթե երկշաբաթյա աշխատանքային այցից անմիջապես հետո, ձեւավորված ավանդույթի համաձայն, երկրի կառավարության հերթական նիստից առաջ հրավիրեց մամլո ասուլիս եւ լրագրողներին ներկայացրեց այն առաջնահերթությունները, որոնք ծառայած են երկրի առաջ, պատասխանեց լազրողների հարցերին:

ԿԻՈՐԱՆԱ ՎՐԱՑ-ԱՄԵՐԻԿԱՆ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՀԱՍԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ
Հանրագումարելով հունիսի 5-14-ը Ամերիկայի Միացյալ Նահանգներ կատարած իր աշխատանքային այցի արդյունքները՝ Վրաստանի վարչապետ Մամուկա Բախտանձե մամլո ասուլիսում հայտարարեց, որ վրաց-ամերիկյան ռազմավարական նոր գործընկերության իրականացման արձանագրությունում նշված են բոլոր այն պայմանները, որոնք հնարավորություն կտան որակապես բարձր մակարդակի հասցնել ռազմավարական (Շարունակությունը՝ 2-րդ էջում)

հայտարարեց, որ վրաց-ամերիկյան ռազմավարական նոր գործընկերության իրականացման արձանագրությունում նշված են բոլոր այն պայմանները, որոնք հնարավորություն կտան որակապես բարձր մակարդակի հասցնել ռազմավարական (Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ՆՇԱՆԱՎՈՒՄ

ՆՈՐ ԴԵՄՔ՝ ՎՐԱՍՏԱՆԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ



Հունիսի 18-ին Վրաստանի վարչապետ Մամուկա Բախտանձե հանրությանը ներկայացրեց Վրաստանի աշխատանքի, առողջապահության, բռնագաղթվածների եւ սոցիալական պաշտպանության նոր նախարարին:
Վարչապետի խոսքով, 2012 թվականից այդ պաշտոնը զբաղեցնող Դավիթ Սեգենկուն պաշտոնաթող է եղել անձնական որոշմամբ:
- Դավիթ Սեգենկուն միշտ եղել, մնում եւ առաջիկայում էլ կշարունա-

կի մնալ մեր թիմի հավատարիմ եւ հաջողակ անդամը,- հայտարարեց վարչապետն ու հավելեց, որ կառավարող թիմն անընդմեջ նորացվելու է, եւ դա երկրի կառավարության (Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ՀԱՅԱՍՏԱՆ

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԸ ՀԱՍՏԱՏԵՑ ԴԵՏԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ

Հունիսի 20-ին Հայաստանի Ազգային ժողովը հավանություն տվեց 2018 թվականի պետական բյուջեի կատարման մասին տարեկան հաշվետվությունը հաստատելու մասին Աժ որոշման մատչագծին: Նախագծին հավանություն է տվել 94 պատգամավոր, դեմ է քվեարկել 17-ը:



Քվեարկությանը նախորդել էին երկու օր տևած քննարկումներն Աժ լիագումար նիստերում: Դրանից առաջ, բյուջեի կատարման մասին հաշվետվության քննարկումներ էին եղել Աժ մշտական հանձնաժողովների համատեղ նիստերում:

մանը Ազգային ժողովում ելույթ ունեցավ Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանը:

ՀԱՄԱՅՆՔ

ԿԻՐԱԿՈՍ ՎԱՐԴԱՊԵՏ ԴԱՎԹՅԱՆԸ՝ ՎԻՐԱՀԱՅՈՑ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴ

Հունիսի 18-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի տեղեկատվական համակարգը տարածել է հայտարարություն, ըստ որի, «Ն.Ա.Օ.Տ.Տ. Գարեգին Երկրորդ Ճայրագուն Պատրիարք եւ Ամենայն Հայոց կաթողիկոսի տնօրինությանը, շուրջ 17 տարի թեմը գլխավորող Տեր Վազգեն եպիսկոպոս Սիրախանյանն ազատվել է Վիրահայոց թեմի առաջնորդի պաշտոնից եւ կվերադառնա Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին: Տնօրինության համար ինքն է ծառայել Վազգեն Սիրազանի դիմումը:

Մեկ այլ տնօրինությանը Յոզեֆ-Նորի Տեր Կիրակոս վարդապետ Դավթյանը, ազատվելով Գեղարքունյաց թեմի առաջնորդական տեղապահի պաշտոնից, նշանակվել է Վիրահայոց թեմում՝ որպես առաջնորդական տեղապահ:



Տեր Կիրակոս վարդապետ Դավթյանը (ավագանի անունը՝ Գեուրգ) ծնվել է 1982 թ. մայիսի 20-ին, Թբիլիսիում: Տեղի թիվ 104 միջնակարգ դպրոցն ավարտելուց հետո, սովորել է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Գեուրգյան հոգևոր ճեմարանում: 2005 թվականին պաշտպանել է ավարտաճան՝ «Հայ-վրացական եկեղեցական բաժանման վավերագրերը» թեմայով: Աշխատել է Մայր Աթոռի «Գարեգին Ա» աստվածաբանական-հայագիտական կենտրոնում:

2005 թվականին ձեռնադրվեց Տեր Եզնիկ արքեպիսկոպոս Պետրոսյանի, ձեռնադրվել է կուսակրոն քահանայ՝ վերակոչվելով Կիրակոս արքեպիսկոպոս: Մինչև 2008 թվականը՝ որպես հոգևոր հովիվ, ծառայել է Վիրահայոց թեմի Բաթումիի Սուրբ Փրկիչ եկեղեցում: Ապա շուրջ չորս տարի (Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ՎՐԱՍՏԱՆ - ՀԱՅԱՍՏԱՆ

«ԲԱՐԵԿԱՄՈՒԹՅԱՆ ԿԱՄՐՋԻ» ԵՆՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԿՄԵԿՆԱՐԿԻ ՕԳՈՍՏՈՍԻՆ

Վրաստանի եւ Հայաստանի միջև պետական սահմանի Սաղախլու-Բագրատաշեն անցակետի տարածքում, Դեբեդ գետի վրա, Վրաստանը եւ Հայաստանը միացնող «Բարեկամության կամուրջ» նախագծի շինարարական աշխատանքները կմեկնարկեն օգոստոս ամսին: Այս մասին հայտարարեց «Tunnel Sadd Ariana» իրանական կազմակերպության հայաստանյան ներկայացուցիչ Արտավազ Բաղմյանը:

«Բարեկամության կամուրջի» երկարությունը մոտ 200 մետր է: Կկառուցվեն երկու առանձին, մեկ մետր հեռավորության գուգահեռ կամուրջներ: Կառուցվող կամուրջի բարձրությունը կլինի 18 մետր, սահմանին գտնվող ներկայիս կամուրջից երկու մետրով բարձր: Յուրաքանչյուր կամուրջի լայնությունը 11,8 մետր է: Յուրաքանչյուր ուղղությամբ կկառուցանա երթևեկել երեք տրանսպորտային միջոց:

ՎՐԱՍԱՆ - ԱՆՆ

ՄԱՍՈՒԿԱ ԲԱՍՏԱԶԵ. «ՀԱՄԱՏԵՂ ՀՈՉԱԿԱԳԻՐՆ ԱՆՑԱԾԻ ՀԱՆՐԱԳՈՒՄԱՐՄԱՆ ԵՎ ԱՌԱՋԻԿԱՅԻ ԾՐԱԳՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՈՒՂԹ Է»

(Սկիզբը՝ 1-ին էջում)

երկու գործընկերների միջև հարաբերությունները: Վարչապետի խոսքով, վերոնշյալ այցը ակնհայտ ցույց տվեց, որ երկու երկրների միջև ռազմավարական գործընկերությունը հասցվել է ավելի բարձր մակարդակի:

- Մենք համատեղ նշեցինք Վրաստան-ԱՄՆ ռազմավարական գործընկերության 10-ամյակը, հանրագումարեցինք անցած ուղին, այն բարեփոխումները, որոնք ԱՄՆ աջակցությամբ, իրականացրինք երկրում: Այն արդյունքները, ինչին հասել ենք, դա մեր ամերիկյան գործընկերների ցուցաբերած աջակցության հետևանք է: Մենք համատեղ ընդունեցինք հռչակագիր, որտեղ նշված են այն ընդհանուր առաջնահերթություններն ու խնդիրները, որոնց հասնելու ենք: Փաստաթուղթը ինքնին բովանդակալից է, կողմնորոշված արդյունքներին եւ միաժամանակ հավակնոտ, - հայտարարեց վարչապետը:

Որպես այցի արդյունավետության վկայություն՝ վարչապետը նշեց ԱՄՆ-ում կայացած մի շարք հանդիպումներ, այդ թվում՝ ԱՄՆ պետքարտուղար Մայք Փոմփեյոյի հետ հանդիպումը, որի ժամանակ անդրադարձ կատարվեց նշանակալից բոլոր հարցերին, դրանց թվում՝ ռուսական բռնագավթման եւ այն ազդեցիկ թեմային, որը Ռուսաստանը իրականացնում է Վրաստանի նկատմամբ:

- Հռչակագրի մեծ մասը նվիրված է տնտեսական համագործակցությանը: Մենք նշանակալի առաջընթացի էինք հասել անվտանգության տեսանկյունից: Փաստաթուղթը իր բովանդակությամբ նշանակալից է: Դրանում ընդգծված է, որ Վրաստանն ունի տարածաշրջանային տնտեսական կենտրոն դառնալու ներուժ: Ամերիկյան կողմից ընդգծվեց Վրաստանի նշանակալից դերը, առանձնապես Սեւ ծովի ավազանի շրջանում, ինչը կրկին ընդգծում է այն հանգամանքը, որ առանց Սեւ ծովի անվտանգության հնարավոր չէ պատկերացնել ՆԱՏՕ-ի տարածքի անվտանգությունը: Այսօր Սեւ ծովը ԱՄՆ-ի համար առաջնահերթային է, եւ դա նշանակալից է Վրաստանի անվտանգության համակարգերի հզորացման տեսանկյունից, - նշեց վարչապետը: Իր խոսքում, վարչապետն անդրադարձ կատարեց նաեւ ԱՄՆ կատարած այցի շրջանակներում կայացած տնտեսական թեմաներով հանդիպումներին: Նրա խոսքով, ամերիկյան ընկերությունները շահագրգռվածություն են հայտնում Վրաստանում պատկառելի գումարի ներդրումներ կատարել այնպիսի հեռանկարային ոլորտներում, ինչպիսիք են էկոնո-

միկան, զբոսաշրջությունը, կրթությունը եւ այլն:

- Ներդրողների խրախուսման նպատակով, նախաձեռնել ենք նշանակալի օրինանախագծեր, որոնք ներկայացվել են երկրի խորհրդարանին: Մասնավորապես, քննարկվում է աննախընթաց հարկային պայմանակարգն այն ընկերությունների համար, որոնք գրասենյակներ կբացեն Վրաստանում եւ Վրաստանից կիրականացնեն գործառնությունը, - ընդգծեց վարչապետը:

ԵՐԿԱՐԱԶԳԿԵԼ Ե ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՎ ՆԱԽՏԵՄԱՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄԸ

Վրաստանի վարչապետ Մամուկա Բախտաձեն հունիսի 17-ին երկրի կառավարության նիստին նախորդած մամուլ ասուլիսում, անդրադառնալով Անակլիայի խորջրյա նավահանգստի շինարարության հետ կապված թեմային, հայտարարեց, որ կառավարությունը «Անակլիայի զարգացման կոնսորցիումի» ներդրումային պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը երկարաձգել է եւս մեկ անգամ եւ սահմանել մինչեւ 2019 թվականի վերջը: Վարչապետի խոսքով, պարտավորությունների կատարման ժամկետների երկարաձգման մասին պայմանավորվածությունը ֆինանսական ինստիտուտների հետ ձեռք է բերվել դեռեւս մայիսի կեսերին:

Մասնավորապես, վարչապետը կանգ առավ վերջերս ամերիկյան Սիետլա քաղաքում Անակլիայի նավահանգստի օպերատոր ընկերության հետ կայացած հանդիպմանը: Ինչպես նշեց վարչապետը, SSA MARINE ընկերության հետ հանդիպումը արդյունավետ էր եւ կողմնորոշված կոնկրետ արդյունքներին:

ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՅԻՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԸ ԱՐԺԱՆԱՎՈՐ ԿԵՆՍԱԹՈՇԱԿԻ ՊԱՐՏԱԳԻՐ ԳՐԱՎԱԿԱՆՆ Է

Անդրադառնալով կենսաթոշակային ոլորտում իրականացվող բարեփոխումների թեմային՝ վարչապետը հունիսի 17-ի մամուլի ասուլիսում հայտարարեց, որ կենսաթոշակային հիմնադրամը Վրաստանում արժանի կենսաթոշակի գրավական է: Վարչապետի խոսքով, կենսաթոշակային հիմնադրամը այլընտրանք չունի եւ առանց դրա անհնար է հասնել սոցիալական պաշտպանության նշանակալի մակարդակի:

- Կենսաթոշակային հիմնադրամն այլընտրանք չունի: Աշխարհի ոչ մի առաջադեմ երկիր, առաջադեմ տնտեսությամբ, չէր կարողանա հասնել սոցիալական պաշտպանության բարձր մակարդակի, առանց կենսաթոշակային հիմնադրամի, - ընդգծեց Մամուկա Բախտաձեն:

ԵՆԹԱԿԱՌՈՒՅՑ

90 ՄԻԼԻՈՆ ԵՎՐՈ՝ ԿՐԹԱՎԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻՆ

Վրաստանի վարչապետ Մամուկա Բախտաձեն, կառավարության նիստին նախորդած մամուլի ասուլիսին հայտարարեց, որ Համաշխարհային բանկը (ՀԲ) կրթական համակարգի համար կհատկացնի 90 մլն եվրո:

Վրաստանի կառավարության ղեկավարը նշեց, որ գումարի հատկացման պայմանագիրը ստորագրվեց հունիսի 18-ին:

- Ուզում եմ ազդարարել շատ կարելի է օրագրի մասին, այն մեր ազգային ծրագիրն է՝ կրթության կարելորագույն

մասը: ՀԲ-ն կրթական համակարգի համար կհատկացնի 90 մլն եվրո: Մեզ համար շատ կանեւոր է, որ միջազգային ֆինանսական ինստիտուտն աջակցում է կրթական բարեփոխմանը: Այս ծրագիրը կնպաստի մեր քաղաքացիների բարեկեցությանը, - հայտարարել է Բախտաձեն:

Նրա խոսքով, ծրագրի շահառուները կլինեն դպրոցի աշակերտները, բուհերի ուսանողները, կընդգրկվեն նաեւ նախադպրոցական կրթական հաստատությունները: Ծրագրում շեշտը դրված է աշակերտների վրա, ովքեր սովորում են բարձր լեռնային շրջաններում, այդ թվում՝ առանձին ծրագիր կա ազգային փոքրամասնություններով բնակեցված շրջանների աշակերտների աջակցության համար:

ՀԱՄԱՅՆՔ

ԿԻՐԱՎՈՍ ՎԱՐԴԱՊԵՏ ԴԱՎԹՅԱՆԸ՝ ՎԻՐԱՅԱՅՈՑ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴ


(Սկիզբը՝ 1-ին էջում)

(մինչեւ 2012 թվականը) սպասավորել է Ավստրալիայի եւ Նոր Զելանդիայի հայոց թեմում՝ որպես Մելբուռնի Սուրբ

Աստվածածին եկեղեցու հոգեւոր հովիվ, երեք տարի որպես փոխառաջնորդ, ծառայել է Ռուսաստանի եւ Նոր Նախիջեւանի հայոց թեմում:

2015 թվականին Հոգեշնորհ Տեր Կի-

րակոս վարդապետ Դավթյանը, ազատվելով Ռուսաստանի եւ Նոր Նախիջեւանի հայոց թեմում ստանձնած պարտականություններից, նշանակվել է Գեղարքունիքի թեմի առաջնորդական տեղապահ:



ԵՎՐԱՄԻՈՒԹՅՈՒՆ ԴԵՎԱՎԱՐՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ԿԱՆՑՎԱՑԿԻ ԱՐՏԱՅԵՐԹ ԳԱՎԱԹԱԺՈՂՎ

Եվրամիության պետությունների ու կառավարությունների ղեկավարները համաձայնության չեն եկել Եվրահանձնաժողովի նոր ղեկավարի շուրջ, բանավեճերը շարունակելու համար հունիսի 30-ին արտահերթ զագաթաժողով է նշանակվել Բրյուսելում: Այդ մասին հայտնել է Եվրախորհրդի ղեկավար Դոնալդ Տրուսկը:

- Թեկնածուներից ոչ մեկը չունի մեծամասնություն, առայժմ վաղաժամ է խոսել անունների մասին: Մենք կրկին կհանդիպենք հունիսի 30-ի զագաթաժողովում, - հայտարարել է նա:

ԱՆՆ

ՍԿՍԿԵՑ ՆԱԽԱԳԱՅՎԱԿԱՆ ՔԱՐԾԱՐԵՆԿԱԸ

Դոնալդ Թրամփն սկսեց իր նախընտրական քարոզարշավը: Այս մասին ԱՄՆ նախագահը հայտարարեց Ֆլորիդայում, կողմնակիցների հետ հանդիպման ժամանակ: Նրա խոսքով, չորս տարի առաջ նա հենց այս օրերին էր հայտարարել իր նախընտրական քարոզարշավի մեկնարկի մասին, որը պատմության մեջ նշանակալի պահ էր:

ԱՄՆ նախագահական ընտրությունները տեղի են ունենալու 2020 թվականին: Վերջերս իրականացրած սոցիոլոգիական հարցումների համաձայն, Դոնալդ Թրամփի հիմնական մրցակիցը Զո Բայդենն է, որին աջակցում է հարցման ենթարկվածների 49 տոկոսը: Նույն հարցման համաձայն, ԱՄՆ գործող նախագահին աջակցում է 39 տոկոսը:

ՍՈՒՂՈՎԱԿ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՐԿԱՍՄԱՆԸ ԿԱՐԳԱՎՈՐՎԵՑ

Մոլդովայի դեմոկրատական կուսակցության կազմած կառավարությունը հրաժարական է ներկայացրել: Այդպիսով, մեկ շաբաթ տեւած քաղաքական ճգնաժամը հանգուցալուծվում է:

Նշենք, որ փետրվարին տեղի ունեցած ընտրություններից հետո միայն, հունիսին կառավարությունը կազմվեց ռուսամետ սոցիալիստների եւ եվրոպայետ ԱԿՈՒՄԲ կուսակցությունների համաձայնությամբ:

Մինչդեռ, Սահմանադրական դատարանը պնդել է, որ կառավարությունն ուշացումով է կազմվել, կարգադրել է լուծարել խորհրդարանը, պաշտոնանկ է արել նոր կառավարությանն աջակցող նախագահ Իգոր Դոդոնին եւ արձակել սեպտեմբերին նոր ընտրություններ անցկացնելու հրամանագիրը:

Ներկա դրությամբ, խորհրդարանի խոսակցը Զինաիդա Գրեչանին է, վարչապետը՝ Մայա Սանդուն:

ՆՇԱՆԱԿՈՒՄ

ՆՈՐ ԴԵՄՔ՝ ՎՐԱՍԱՆԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ

ԷԿՍՏԵՐԻՆԵ ՏԻԿԱՐԱՅԵՆ՝ ԱՌՈՂՁՊՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ, ԻՍԿ ԳԱՎԻԹ ՍԵՐԳԵՆԵԿՈՆ՝ ՎԱԶՄՊԵՏԻ ԽՈՂՐԳԱԿԱՆ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

առաջնահերթությունն է: Վարչապետի խոսքով, Դավիթ Սերգենեկոն իր գործունեությունը կշարունակի՝ որպես վարչապետի խորհրդական:

Մամուկա Բախտաձեն երկրի առողջապահության ոլորտի ղեկավարի պաշտոնում ներկայացրեց 42-ամյա Էկատերինե Տիկարաձեի թեկնածությունը: Խոսելով առաջիկա անելիքների մասին՝ նորանշանակ նախարարը հայտարարեց, որ մոտ ապագայում կսկսվի ոլորտի բարեփոխման երկրորդ փուլը:

- Այսօր կարող ենք վստահությամբ ասել, որ առողջապահության համակարգի բարեփոխման առաջին փուլը հաջողությամբ ավարտվեց: Հարկ է նշել, որ դա ողջ թիմի եւ կոնկրետ Դավիթ Սերգենեկոյի շնորհն է: Առաջիկայում մենք կիրականացնենք երկրորդ փուլը, որը նախատեսում է առավել արդյունավետ եւ անբողջական կա-

ռավարում, - հայտարարեց Էկատերինե Տիկարաձեն:

Նշենք, որ Էկատերինե Տիկարաձեն, ինչպես եւ Դավիթ Սերգենեկոն, իշխանության են եկել Սաչխերեի շրջանային հիվանդանոցից, որը ֆինանսավորում էր Բիծինա Իվանիշվիլու «Քարթու» հիմնադրամը՝ իշխող կուսակցության լիդերը ծնունդով Սաչխերեի շրջանից է:

Տիկարաձեն գերմանական Donau-Universität Krems-ի շրջանավարտ է: Աշխատել է Գերմանիայի առաջատար կլինիկաներում: 2009 թվականից սկսած՝ աշխատանքի է իրավիրվել Սաչխերեի շրջանային հիվանդանոցում, որտեղ, շնորհիվ Իվանիշվիլու, շրջանի բնակիչներն անվճար բուժում են ստացել:

2015 թվականի սեպտեմբերից Էկատերինե Տիկարաձեն Դավիթ Սերգենեկոյի խորհրդով դարձել է հիվանդանոցի տնօրեն: Սերգենեկոն նախկինում, մինչեւ 2012 թվականը, զբաղեցնում էր հիվանդանոցի տնօրենի պաշտոնը: Իշխանության գալուց հետո, «Քարթու»



հիմնադրամը դադարեցրել էր Սաչխերեի շրջանի բնակիչների անվճար բուժումը՝ բացատրելով, որ նոր իշխանությունների շնորհիվ, երկրում սկսել է գործել ընդհանուր անվճար ապահովագրման ծրագիր:

Շարաքից շարաք. Փաստեր եւ իրադարձություններ

ՀԱՂՈՐԳՈՒՄ ԵՆ «ՎՐԱՍՏԱՆԻ» ԵՎ ԼՐԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹՂԹԱԿԻՑՆԵՐԸ

ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄ

«ՍԱՐԱԿՆԵՐԻ ՅԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ» ՏԱՊԱԼԿԵՑ

Սեռական փոքրամասնությունների (ԼԳՖՏ) կողմից հունիսի 18-23-ը ծրագրվել էր «Թբիլիսի փրայդ» միջոցառումը, ինչը լուրջ անհանգստություն էր առաջացրել հասարակության շրջանում:

Ի պատասխան ծրագրված «Թբիլիսի փրայդի», հունիսի 17-ին մայրաքաղաքի Վերայի զբասայգում կայացած հանրահավաքին որոշվեց կազմակերպել «Արժանապատվության երթ»: Համահավաքի մասնակիցները որոշում ընդունեցին իրենց ուժերով վերահսկել իրավիճակը յուրահատուկ պարեկություն կազմակերպել այն վայրերում, որտեղ սեռական


փոքրամասնությունները մտադիր էին անցկացնել իրենց միջոցառումները դրանով իսկ կանխելու այսպես կոչված «Մահակների հեղափոխությունը»:

Նշենք, որ այդ ամենին մախորդել էր Վրաց Ուղղափառ եկեղեցու պատրիարքության հատուկ հայտարարությունը, որը կանխատեսելով նման միջոցառումների անցկացման վտանգավորությունը, նշում է,

որ քաղաքական առանձին ուժեր փրձում են ԼԳՖՏ փրաթիվ խմբերին օգտագործել իրենց նպատակների համար:

Հաշվի առնելով ստեղծվող իրավիճակի սրությունը եւ դրա հնարավոր հետեւանքները՝ իշխանությունները դիմեցին «Արժանապատվության երթի» կազմակերպիչներին, կոչ անելով խուսափել պետական իրավապահ մարմինների իրավասությունների ինքնակամ յուրացման փորձերից՝ հավաստիացնելով, որ իրավապահ մարմինները թույլ չեն տա որեւէ ապօրինի եւ հակահասարակական

գործողություն: ՆԳ նախարարությունում ԼԳՖՏ ակցիայի կազմակերպիչների, Վրաստանի ժողովրդական պաշտպան Նինո Լոնջարիայի ու գերատեսչության ղեկավարության հանդիպմանը նախարարությունը կտրականապես ընդօժեց իր բացասական վերաբերմունքը «Թբիլիսի փրայդի» կապակցությամբ: Միաժամանակ, ՆԳ նախարարությունը գգուցացրել է, որ հետաքննություն կսկսի սահմանադրական շրջանակներից դուրս որեւէ խմբավորման ստեղծման կոչերի կապակցությամբ:



ԿԱՐԳԱՎՈՐՎԻ ԱՅՆ ԵՐԿՐԻ ԴՐՈՇՆԵՐ ԿԱՆՔՆԵՑՆԵՆԼՈՒ ՀԱՐՑԸ

Վրաստանում առաջարկվում է արգելել այն երկրի դրոշը, որի հետ երկիրը դիվանագիտական հարաբերություններ չունի կամ հակամարտության մեջ է:

Ելնելով հարցի կարելիությունից՝ Վրաստանի խորհրդարանի զինանշագիտության (հերալդիկայի) պետական խորհուրդը կնշակի Վրաստանի տարածքում այլ երկրների դրոշների կանգնեցման ու ծածանման կարգը:

Խորհրդի հայտարարությամբ, հիշյալ օրենքը հետագայում կօգնի խուսափել թյուրիմացություններից:

ԱՎԵԼԱՑԵԼ Ե ՓՈԽԱՆՑՈՒՄՆԵՐԻ ԾԱՎԱԼԸ

2019 թվականի մայիսին արտասահմանից Վրաստան է փոխանցվել 145,8 մլն դոլար, որը 11,8%-ով ավելի է՝ համեմատած 2018 թվականի հետ:

Ազգային բանկի տվյալներով, ամենաշատ փոխանցումները եղել են Եվրամիությունից՝ 57,1 մլն դոլար, այդ թվում՝ Իտալիայից՝ 20,3 մլն, Գերմանիայից՝ 16,6 մլն եւ Գերմանիայից՝ 4,23 մլն դոլար: Եվրամիությունից հետո, երկրորդ տեղում է Ռուսաստանը՝ 34,8 մլն դոլար:

Զգալի աճել են ԱՄՆ-ից փոխանցումները, որոնք կազմում են 15,9 մլն դոլար:

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ՄԻ ՔԱՆԻ ՄԻՆՈՆ ԼԱՐԻ՝ ԿԵՆՍԱԹՈՇՆԱԿԱՅԻՆ ՏԱՐԻՔԻ ՈՒՍՈՒՅԻՆԵՐԻ ԽՐԱՄՈՒՄՍԱՆ ՀԱՍԱՐ

Աշխատանքից հեռանալ ցանկացող կենսաթոշակային տարիքի ուսուցիչների խրախուսման համար, պետությունը հասկացնում է մի քանի միլիոն լարի:

Ինչպես հայտարարեց Վրաստանի կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի փոխնախարար Իրինա Աբուլաձեն, աշխատանքից հեռանալ ցանկացող ուսուցիչներին դրամական պարգևները կտրվեն օգոստոս-սեպտեմբերին:

- Մենք ոչ մեկին չենք պարտադրում, տվյալ պարագայում գործում է ծրագիր կամ առաջիկա երեք տարիների աշխատավարձի ավելացում, կամ ֆինանսական պատկառելի գումարի տեսքով երկամյա պարգևի ստացման առաջարկություն եւ հնարավորություն կենսաթոշակային տա-

րիքի ուսուցիչների համար, եթե նրանք չեն ցանկանա մնալ դպրոցում: Գործընթացը խրախուսում է այն, ինչ մի կողմից մարդկանց թույլ կտա բավարարվել աշխատավարձի ավելացմամբ, իսկ մյուս կողմից՝ այն ֆինանսավորմամբ, որը նրանց համար սահմանում է պետությունը: Ներկա դրությամբ, բյուջեի գումարները չեն առանձնացվել, սակայն կառավարության առաջիկա միտումն է կենտրոնանալ սխեմայի փոփոխությունները, որի նախագիծն արդեն պատրաստ է: Ներկա դրությամբ, գրանցված է շուրջ 6 հազար կենսաթոշակային

տարիքի մանկավարժ, ովքեր ցանկություն են հայտնել ստանալ երկամյա դրամական պարգև: Դրամական պարգևների հանձնումը կսկսվի մինչև նոր ուսումնական տարին, օգոստոս-սեպտեմբեր ամիսներին, - հայտարարեց Իրինա Աբուլաձեն:

Նշենք, որ Վրաստանի կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարության տվյալներով, Վրաստանում ներկա դրությամբ աշխատող 64329 մանկավարժներից 16406-ը կենսաթոշակային տարիքի են, որոնցից երկամյա ֆինանսական դրամական պարգևի ստացման ցանկություն է հայտնել կենսաթոշակային տարիքի ավելի քան 6 հազար մանկավարժ:

ՄԻՍՈՆ ԿԻԼԱՇԵ

ՅՅՄՕՆԱՅՅՄՅՈՆՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԶԱՆԴԻՊՈՒՄ ԵՎ ԱՍՈՒՅԻՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Հունիսի 3-7-ը Թբիլիսիում կայացավ համաշխարհային մաքսային կազմակերպության դասակարգման հարցերով բաժանմունքի փորձագետների ղեկավարությամբ, համապատասխանեցման համակարգերի հարցերով աշխատանքային հանդիպում, որի նպատակը ֆինանսների նախարարության եկամուտների ծառայության, ապրանքի դասակարգման ոլորտում հնարավորությունների զարգացման ապահովումն է: Աշխատանքային հանդիպմանը մասնակցեցին եկամուտների ծառայության մաքսային ղեկավարման տարբեր վարչությունների աշխատակիցներ: Մասնակիցներին հնարավորություն տրվեց, փորձագետների հետ միասին, մանրամասն ծանոթանալ համապատասխանեցման համակարգի աշխատանքին եւ ուսումնասիրել ապրանքների դասակարգման օրինակները:

ԲԱՅԱԶԱՅՑՎԵԼ Ե ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՈՒԹՅԱՆ ԽԱՄՏՄԱՆ 512 ԴԵՊԵ

Հունիսի 10-16-ը ներառյալ Վրաստանի ֆինանսների նախարարության եկամուտների ծառայության հարկային մոնիթորինգի ղեկավարման տարբեր կողմից երկրի ողջ տարածքով անցկացված ստուգիչ միջոցառումների արդյունքում, բացահայտվել է հարկային օրենսդրության խախտման 512 դեպք:

Մասնավորապես, ֆինանսների նախարարության եկամուտների ծառայության հարկային մոնիթորինգի ղեկավարման տարբեր վարչությունների աշխատակիցները հայտնաբերեցին 3775 հարկատուի: Ստուգման արդյունքում, բացահայտվել են հարկային օրենսդրության հետեւյալ խախտումները. առանց ապրանքագրերի ապրանքների փոխադրման 152 փաստ, տնտեսական գործունեության իրականացման համար հարկատուի կողմից օրենսդրությամբ սահմանված կարգի 41 դեպք, կանխիկ գումարներով առքուվաճառքի ժամանակ գանձարկղային սարքի անտեսման 319 փաստ:

ՁԱՅՑՈՒՄ ԱՅՏՈՒՄ

ՈՂՋ ԱՄՍԱՆ ԱՊՐԻՐ ՄԱԳԹԻԻ ՀԱՄԱՑԱՆՑԱՅԻՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ

Օպտիկական համացանցի կրկնապատկված արագություն

Նվերի ակտիվացման համար զանգահարեք **0800100202** հեռախոսահամարով և առանց լրացուցիչ մուծման ստացեք օպտիկական-մանրաթելային համացանցի կրկնապատկված արագություն

Առավելագույն կրկնապատկված արագությունը 100Մբ/վրկ

Մագթիկի նվերը

ՀԱՅՏՆԻ ԱՆՈՒՆԵՐ

Գայանե խաչատրյանը լույս աշխարհ էր եկել Թբիլիսիում, Լեւոն խաչատրյան եւ Յասմին Բալանթարյան ամուսինների ընտանիքում: Ի դեպ, նրանք բնակվում էին քաղաքի Պլեխանովի (այժմ՝ Դավիթ Աղամաշենբեկու) պողոտային հարակից՝ Բաքվի փողոցում: Յասմին Բալանթարյանը ծագումով պատմական Յասաստանի մշակութային հայտնի Գողթն գավառի Ագուլիս քաղաքից էր ու սերունդ էր հին հայկական ազնվական տոհմից: Գայանեն շատ էր կապված մոր հետ եւ նրա մասին հաճախ պատմում էր այն, որ տիկին Յասմինը լավ մանուկահասար էր ու դասական երաժշտության, օպերայի սիրահար, նաեւ՝ խորությամբ ընկալուն էր կերպարվեստը եւ այս ամենը սիրով փոխանցել է դստերը: Յատկապես մեծ էր նրա աջակցությունը, երբ Գայանեն սովորում էր մայրաքաղաքի Յակոբ Նիկողաձեի անվան գեղարվեստի ուսումնարանին կից գեղարվեստի դպրոցում: Գայանեն ավարտել է քաղաքի թիվ 14 օրիորդաց դպրոցը, այնուհետեւ, 1955-1959 թվականներին ուսումը շարունակել թիվ 101 միջնակարգ դպրոցում: Միակ մասնագիտական կրթությունը եղել է գեղարվեստի դպրոցի չորսամյա դասընթացը: Սակայն, նկարչուհին կարեւորում էր նշյալ դպրոցի ուսուցչուհի Գուգուկի Քուրդիանու դերը, ով հասկացել էր Գայանեի տեսակն ու կարողացել ճիշտ ուղղություն տալ նրա բնականից տրված տաղանդին: 1962 թվականին Գայանեն ծանոթանում է

ԱՆՈՒՆ «ԳԱՅԱՆԵ» ՄԱԿԱԳՐՈՒԹՅԱՄ

Մայիս ամիսն ինձ ականայից հիշեցրեց հանճարեղ նկարչուհի Գայանեին, քանի որ այդ ամիսը ճակատագրական էր նրա համար, ծնվել էր մայիսի 9-ին, իսկ կյանքից հեռացել՝ այդ ամսվա առաջին օրը: Կարծում եմ՝ ինչպես անցյալում, այնպես էլ՝ ներկայում ու ապագայում Գայանեին նվիրված խոսքերն ու մտքերը ժողովրդելի, ամփոփվում ու դեռ ի մի են բերվելու հետագայում, իսկ մենք փորձենք ներկայացնել մեր Գայանեին՝ որպես մեծագույն հարգանքի տուրք նրա պայծառ հիշատակի առաջ, այն համոզմամբ, որ ապագան Գայանեինն է:



Լուսանկարը Յուրի Մեչտովի. Նկարչուհին մոր նկարի հետ (1990 թ. հունիսի 2)

թբիլիսցի հայտնի գեղանկարիչ Ալեքսանդր Բաժբեուկ-Մելիքովի (1891-1966) հետ: Իրականում, հենց նա էլ դառնում է Գայանեի ուսուցիչն ու խորհրդատուն, ում հորդորով նկարչուհին հետագայում չկամեցավ ընդունվել գեղարվեստի ակադեմիային, քանի որ, ըստ մեծ արվեստագետի, բարձրագույն կրթությունը որոշակի առումով շրջանակների մեջ է դնում նկարչի ստեղծագործական մտածողությունը: Գայանեն սկսեց զբաղվել ինքնակրթությամբ: Նա ուսումնասիրել է հայկական միջնադարյան մանրանկարչությունը, վրացական

որմանակարները, եվրոպական, արեւելյան, հատկապես չինական դասական գեղանկարչությունը: Եվ իբրեւ ասածի վկայություն, այսօր էլ նրա համեստ բնակարանի մի ամբողջ պատ զբաղեցնում են համաշխարհային մշակութային շրջանակներում արվեստագետի աշխարհայեցողության զարգացմանը: Նա տարված էր գրականությամբ, փիլիսոփայությամբ եւս, գրում էր նովելներ, էսսեներ, ուներ բացառիկ ձայն՝ կոնտրալտո: Արվեստագետի ուսուցիչների շարքում արձա-

նագրենք նույնպես հանրաճանաչ նկարչուհի էլենե Ախվլեդիանու (1901-1975) անունը, ում խորհուրդները միշտ էլ արժեքավոր են եղել նրա համար: Գայանեն համեստ էր իր կենցաղով, ապրելակերպով, բնավորությամբ՝ սակավախոս էր, մարդկանց հետ քիչ շփվող, սակայն օժտված էր նրանց լսելու բացառիկ ունակությամբ: Գրեթե չկար մի թեմա, որի մասին խորը գիտելիքներ չունենար, սակայն պերճախոս էր դառնում, երբ խոսակցությունը գեղարվեստի շուրջ էր ընթանում: Յիշում եմ, երբ ես մի առիթով Գայանեի տանն էի, նա հարցազրույց էր տալիս: Լրագրողի այն հարցին, թե ի՞նչ է Գայանե խաչատրյանի համար նկարչական արվեստը, հնչում է հետեւյալ պատասխանը. «Գեղանկարչությունը անբաժանելի է ինձնից, նա իմ մաշկն է, իմ կմախքը, ես պարզապես չեմ կարող առանց վրձնի, առանց ներկապակի, առանց ներկերի»: Իսկ սեփական ստեղծագործական ուղղության, ժանրի, տեսակի մասին խոսելիս՝ Գայանեն նշում էր, որ իր արարածները ինքնատիպ են, անհատական ու վերարտադրում են բացառապես իր ներաշխարհը, մտացածին երեւակայական աշխարհը: Ու բոլոր կտավներում առկա կլորադեմ կնոջ կերպարը իր Նինո տատն է, որին պատկերել է 19-րդ դարի թիֆլիսյան կանանց հագուստով: (Շարունակությունը՝ 5-րդ էջում)

ԿՐԹԱԿԱՆ

ՀԱՅՏՆԻ ԵՆ ԱԶԳԱՅԻՆ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑՆ ՈՒ ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԳՆԱՀԱՏԱԿԱՆՆԵՐԸ



Գնահատման եւ քննությունների ազգային կենտրոնը տարածել է տեղեկատվություն, ըստ որի, 2019 թվականի ազգային քննությունները տարբեր առարկաներից անցկացվելու են հուլիսի 1-ից 23-ը ներառյալ:

Այս պես, հուլիսի 1-2 (առաջին եւ երկրորդ սեսիա) - վրաց լեզու եւ գրականություն, հուլիսի 1 (առաջին սեսիա) - արխագրերեն, հուլիսի 1 (առաջին սեսիա) - օսերեն, հուլիս 3-4 (առաջին եւ երկրորդ սեսիա) - ընդհանուր ունակություններ, հուլիսի 5 (առաջին սեսիա) - մաթեմատիկա, օտար լեզու, հուլիսի 8-9 (առաջին եւ երկրորդ սեսիա) - անգլերեն, հուլիսի 8 (առաջին սեսիա) - ռուսաց լեզու, հուլիսի 8 (երկրորդ սեսիա) - գերմաներեն, հուլիսի 8 (երկրորդ սեսիա) - ֆրանսերեն, հուլիսի 10 (երկրորդ սեսիա) - քիմիա, հուլիսի 11 (երկրորդ սեսիա) - կենսաբանություն, հուլիսի 12 (երկրորդ սեսիա) - կերպարվեստ եւ կիրառական արվեստ, հուլիսի 15 (առաջին եւ երկրորդ սեսիա) - պատմություն, հուլիսի 16

(առաջին եւ երկրորդ սեսիա) - աշխարհագրություն, հուլիսի 19 (երկրորդ սեսիա) - քաղաքացիական կրթություն, հուլիսի 22 (առաջին սեսիա) - գրականություն, հուլիսի 23 (առաջին սեսիա) - ֆիզիկա: Ինչ վերաբերում է անցումային միավորներին, ապա ըստ Գնահատման եւ քննությունների ազգային կենտրոնի տեղեկատվության, սահմանվել են միասնական ազգային քննությունների յուրաքանչյուր առարկայի նվազագույն եւ առավելագույն բալերը: Յայտնի է նաեւ յուրաքանչյուր առարկայի քննության տեւողությունը: Այսպես, վրաց լեզու եւ գրականության քննության առավելագույնը 70 միավորն է, նվազագույնը՝ 18, տեւողությունը՝ 3 ժամ 45 րոպե: Ընդհանուր ունակություններ քննության առավելագույնը 80 միավորն է, նվազագույնը՝ 24, քննության բանավոր մասի տեւողությունը՝ 1 ժամ 35 րո-

պե: Նույնքան է կազմում նաեւ մաթեմատիկայի բանավոր մասի տեւողությունը: Օտար լեզվի քննության առավելագույն միավորը 80-ն է, նվազագույնը՝ 17, տեւողությունը՝ 2 ժամ 30 րոպե, գրականության քննության առավելագույն միավորը 70-ն է, նվազագույնը՝ 18, տեւողությունը՝ 4 ժամ, մաթեմատիկայի քննության համար առավելագույնը 59, նվազագույնը՝ 15 միավոր, տեւողությունը՝ 3 ժամ 40 րոպե, պատմության քննության առավելագույնը՝ 70, նվազագույնը՝ 18 միավոր, տեւողությունը՝ 2 ժամ 40 րոպե, կենսաբանության քննության առավելագույնը՝ 70, նվազագույնը՝ 18 միավոր, տեւողությունը՝ 2 ժամ 30 րոպե, քիմիայի քննության առավելագույնը՝ 75, նվազագույնը՝ 19 միավոր, տեւողությունը՝ 3 ժամ 40 րոպե, ֆիզիկայի քննության առավելագույնը՝ 75, նվազագույնը՝ 19 միավոր, տեւողությունը՝ 3 ժամ 40 րոպե:

ՀՐԱԴԱՐԱԿՎԵԼ Ե ՈՒՍՈՒՅԻՉՆԵՐԻ ՀԱՎԱՏԱՏԱԳՐՄԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ

Վրաստանի գնահատման եւ քննությունների ազգային կենտրոնը հրատարակել է ուսուցիչների՝ 2019 թվականի հավաստագրման քննությունների անցկացման ժամանակացույցը:

Այսպես, հուլիսի 10 եւ 11-ին կանցկացվեն մասնագիտական ունակությունների քննությունները, հուլիսի 12-ին՝ վրաց լեզվի եւ գրականության, մաթեմատիկայի եւ բնագիտության (I-IV) քննությունները, հուլիսի 17-ին՝ երաժշտության, պատմության, աշխարհագրության, քաղաքացիական կրթության, վրաց լեզվի եւ գրականության (VII-XII) քննությունները, հուլիսի 18-ին՝ ֆիզիկայի, մաթեմատիկայի (VII-XII), կերպարվեստի, քիմիայի, սպորտի քննությունները, հուլիսի 19-ին՝ կենսաբանության, անգլերենի, ռուսերենի, գերմաներենի, ֆրանսերենի եւ վրացերենի՝ որպես երկրորդ լեզու (նշված բոլոր լեզուների գրավոր մասը) տեղեկատվական եւ հաղորդակցական տեխնոլոգիաների քննությունները, հուլիսի 20-ին՝ անգլերենի, ռուսերենի, գերմաներենի, ֆրանսերենի եւ վրացերենի՝ որպես երկրորդ լեզու (նշված բոլոր լեզուների գործնական մասը) քննությունները, իսկ հուլիսի 21-ին՝ տեղեկատվական եւ հաղորդակցման տեխնոլոգիաների գործնական մասի քննությունը:

ՈՒՍՈՒՅԻՉՆԵՐԸ ՊԱՏՐԱՍ ԵՆ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ

Ինչպես արդեն հաղորդել ենք, անցկացվել է ուսուցիչների առարկայական եւ մասնագիտական իրավասության հաստատման քննություններին գրանցումը: Ներկա դրությամբ, արդեն գրանցվել է ավելի քան 31 հազար դիմորդ, որից 20 հազարից ավելին գործող ուսուցիչներ են: Ավելացնենք, որ իրավասության հաստատման քննության միավորներին համապատասխան բաշխվելու են կրեդիտ միավորները:

Ինչ վերաբերում է վերոնշյալ քննություններին Վրաստանի գնահատման եւ քննությունների ազգային կենտրոնի կողմից սահմանված նվազագույն եւ առավելագույն միավորներին, ապա ստորեւ ներկայացնում ենք չգործող ուսուցիչների համար սահմանված միավորները (նշենք, որ առանձին առարկաների հաշվով, մասնավորապես, օտար լեզու, տարրական մաթեմատիկա (I-IV), վրաց լեզու եւ գրականություն (I-IV), մաթեմատիկա (I-IV), բնագիտություն (I-VI), վրացերենը՝ որպես երկրորդ լեզու, ինֆորմատիկա առարկաների քննությանը մասնակիցը պետք է հաղթահարի միջին սահմանը, քանի որ թեստը բաղկացած է մի քանի փուլից): Նախ, գործող ուսուցիչ չհամարվող

դիմորդի կողմից առարկայական քննությունը հանձնած կհամարվի, եթե նա հավաքի առավելագույն միավորների 60%-ից ավելին: Ինչ վերաբերում է առավելագույն եւ նվազագույն (անցողիկ) միավորին, ապա վրաց լեզու եւ գրականություն առարկայի քննության առավելագույն միավորը 70-ն է, իսկ անցողիկը՝ 43, մաթեմատիկա՝ համապատասխանաբար՝ 52 եւ 32, աշխարհագրություն՝ 59 եւ 36, կենսաբանություն՝ 63 եւ 38, քիմիա, ֆիզիկա՝ 70 եւ 43, պատմություն՝ 60 եւ 37, քաղաքացիական կրթություն՝ 60 եւ 37, օտար լեզու՝ 90 եւ 55: Ստորական մասի առավելագույն միավորը 16-ն է, իսկ անցողիկը՝ 6, գրավոր մա-

սինը՝ 22 եւ 8, ընթերցանության մասինը՝ 36 եւ 12, խոսակցական մասինը՝ 16 եւ 6: Տարրական մաթեմատիկա (I-IV)՝ առավելագույն միավորը 80-ն է, իսկ անցողիկը՝ 49, մասնագիտական գիտելիքի առավելագույն միավորը 62-ն է: Ակադեմիական հմտություններ՝ առավելագույն միավորը 18-ն է, իսկ անցողիկը՝ 8, վրաց լեզու եւ գրականություն (I-IV)՝ 65 եւ 40, մասնագիտական գիտելիք՝ առավելագույն միավորը 47-ն է: Ակադեմիական հմտություններ՝ առավելագույն միավորը 18-ն է, իսկ անցողիկը՝ 8, մաթեմատիկա (I-IV)՝ 65 եւ 40: Մասնագիտական գիտելիք՝ առավելագույն միավորը 47-ն է: Ակադեմիական հմտություններ՝ առավելագույն միավորը 18-ն է, իսկ անցողիկը՝ 8: Բնագիտություն (I-VI)՝ առավելագույն միավորը 65-ն է, իսկ անցողիկը՝ 40: Մասնագիտական գիտելիք՝ առավելագույն միավորը 47-ն է: Ակադեմիական հմտություններ՝ առավելագույն միավորը 18-

ն է, իսկ անցողիկը՝ 8: Կերպարվեստ՝ առավելագույն միավորը 60-ն է, իսկ անցողիկը՝ 37: Վրացերենը՝ որպես երկրորդ լեզու՝ 95 եւ 58: Ստորական մասի քննության առավելագույն միավորը 11-ն է, իսկ անցողիկը՝ 5, ընթերցանության մասինը՝ 28 եւ 12, գրավոր մասինը՝ 20 եւ՝ 9: Մասնագիտական գիտելիքներ՝ առավելագույն միավորը 25-ն է, իսկ անցողիկը՝ 11, խոսակցական մասինը՝ 11 եւ 5: Ինֆորմատիկա առարկայի քննության առավելագույն միավորը 70-ն է, իսկ անցողիկը՝ 43-ը, տեսական գիտելիք՝ 35 եւ 14, գործնական հմտություններ՝ 35 եւ 14: Սպորտ՝ առավելագույն միավորը 70-ն է, իսկ անցողիկը՝ 43: Երաժշտություն՝ առավելագույն միավորը 70-ն է, իսկ անցողիկը՝ 43: Մասնագիտական հմտություններ՝ առավելագույն միավորը 70-ն է: **Խորագրի նյութերը պատրաստեց ԱՐԵՎԻԿԱ ՄԱՆՈՒԿՅԱՆԸ**